ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Բոլորեց ականավոր գիտնական, միջազգային մեծ ճանաչում ունեցող, հասարակական խոշոր գործիչ Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակը: Վաստակաշատ գիտնականն ապշեցնում է իր եռանդով, լայնախոհությամբ, երևույթները գիտականորեն մեկնաբանելու ունակությամբ և երկաթյա տրամաբանությամբ: Պատահական չէ, որ տարբեր ազգերի մասնագետներ նրան բնութագրում են որպես «նոր գաղափարների գեներատոր»:

Նա ծնվել է 1930 թ. հունիսի 10-ին, Լենինականում: 1953-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, իսկ 1956-ին՝ ասպիրանտուրան: 1960 թ. աշխատանքի անցնելով Հայաստանի գիտությունների ակադեմիայի նորաստեղծ Արևելագիտության սեկտորում, որը 1971 թ. վերակազմավորվեց Արևելագիտության ինստիտուտի, Ն. Հովհաննիսյանի հետագա ողջ գիտական գործունեությունը մինչև օրս, ավելի քան 55 տարի, կապված է Հայաստանի համար առանձնահատուկ նշանակություն ունեցող այդ գիտական կենտրոնի հետ: Անցնելով գիտնականի համար զարգացման բոլոր անհրաժեշտ փուլերը՝ բարձրագույն կրթություն, ասպիրանտուրա, կրտսեր, ապա ավագ, նաև առաջատար գիտաշխատող, գլխավոր մասնագետ և բաժնի վարիչ՝ նա ձևավորվում է որպես պրոֆեսիոնալ արաբագետ և արևելագետ, միջազգային հարաբերությունների հմուտ գիտակ, տիրապետելով իր մասնագիտության բոլոր գաղտնիքներին, որը համաշխարհային ամենակարևոր գիտական ուղղություններից է: Եվ այսօր Հայաստանի գիտական աշխարհը ի դեմս Նիկոլայ Հովհաննիսյանի, ունի միջազգային չափանիշներով խոշոր արևելագետ-գիտնական, որի ուսումնասիրությունները խորապես ազդել ու շարունակում են ազդել միջազգային արևելագիտության զարգացման վրա: Նա պատմաբան արևելագետ-արաբագետ և միջազգայնագետ է, պատմական գիտությունների դոկտոր (1968 թ.), պրոֆեսոր (1971 թ.), գիտության վաստակավոր գործիչ (2003 թ.), Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ (2006 թ.): ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և արդի հայ արևելագիտության հիմնադիրներից, հիմնասյուներից ու ղեկավարներից մեկն է, գիտության ականավոր կազմակերպիչ: 1984-1995 թթ. եղել է Արևելագիտության ինստիտուտի տնօրենի՝ գիտական գծով տեղակալ, իսկ 1995-2006 թթ՝ նույն ինստիտուտի տնօրեն: Այդ ծանր տարիներին և գիտության համար ոչ նպաստավոր ժամանակաշրջանում, Ն. Հովհաննիսյանին հաջողվեց պահպանել հայ արևելագետների գենոֆոնդը և այն համալրել երիտասարդ ու խոստումնալից կադրերով:

Արևելագիտության ինստիտուտը ոչ միայն չփլուզվեց, այլև դարձավ նշանավոր գիտական կենտրոն՝ ստանձնելով մի նոր, ռազմավարական բնույթի առաքելություն: Նա հայկական արաբագիտական դպրոցի հիմնադիրն ու ճանաչված առաջատարն է և ավելի քան քառասուն տարի (1962-2003 թթ.) գլխավորել է իր իսկ հիմնած Արաբական երկրների բաժինը, կարևոր դեր է խաղացել Արևելագիտության ինստիտուտի Արևելյան Ասիայի երկրների բաժնի ստեղծման և կազմակերպման գործում: Մեծ է նրա ներդրումը նաև Կահիրեի համալսարանի Հայկական հետազոտությունների կենտրոնի կազմակերպման բնագավառում:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը 2006 թվականից ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի խորհրդական է, Մերձավոր ու Միջին Արևելքի միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների ուսումնասիրությունների բաժնի վարիչ ու գլխավոր մասնագետ, իսկ 2007 թվականից՝ նաև ՀՀ պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետի խորհրդատու:

Մեծ և ծանրակշիռ է Ն. Հովհաննիսյանի գիտական վաստակը: Տասնամյակներ շարունակ հայ ականավոր գիտնական-արևելագետի և միջազգայնագետի ուսումնասիրությունների կենտրոնում են եղել արաբական երկրների պատմության, միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների, իսլամի, պատմական տարբեր դարաշրջաններում հայ-արաբական, այդ թվում և միջպետական հարաբերությունների արդիական հիմնախնդիրները: Նա Խորհրդային Միությունում առաջիններից էր, որ ձեռնամուխ եղավ արաբական երկրների ազգային ազատագրական շարժումների համալիր ուսումնասիրությանը և ընթերցողի սեղանին դրեց յոթ հատոր, այդ թվում՝ այնպիսի արժեքավոր մենագրություններ, ինչպիսիք են՝ «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում» (Ե., 1963, հայերեն, Բեյրութ, 1974, արաբերեն), «Սիրիական անկախ հանրապետության ստեղծումը» (Մ., 1968, ռուսերեն, Ե., 1976, հայերեն, Հալեպ, 2010, արաբերեն), «Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում» (Ե., 1976, ռուսերեն), «Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիքորոշումը (1975-1982)» և այլն: Արաբական ազգային-ազատագրական շարժումների և արաբական պետությունների անկախության նվաճման հայեցակարգային շատ հիմնախնդիրներ լուսաբանվել են Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնում Ն. Հովհաննիսյանի և նրա ղեկավարած բաժնի աշխատակիցների կողմից:

Առանձնահատուկ նշանակություն ունի 2003-2007 թթ. պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի հրատարակած «Արաբական երկրների պատմությունը (VIIդ.-2005 թթ)» քառահատոր, իր բնույթով եզակի, կոթողային աշխատությունը, որի նմանն անգամ իրենք՝ արաբները չունեն: Այդ քառահատորյակը հայերենից թարգմանվեց արաբերեն և 2011 թ. հրատարակվեց Հալեպում ու տարածվեց արաբական բոլոր երկրներում: Մասնագետները հայ գիտնականի աշխատությունը գնահատեցին որպես դասական ուսումնասիրություն, որը 2007 թ. արժանացավ Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակին:

Ն. Հովհաննիսյանի անվան հետ է կապված միջարաբական հարաբերությունների դիտարկումը՝ որպես միջազգային հարաբերությունների և դիվանագիտության նոր, առանձին և ինքնուրույն ոլորտ: Նա և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնի գիտաշխատողներն առաջին անգամ սկսեցին հետազոտել այդ նոր երևույթը:

1985 թ. ռուսերենով հրատարակվեց Ն. Հովհաննիսյանի «Իրաքի Հանրապետության հարաբերությունները Արաբական Արևելքի երկրների հետ» հույժ ինքնատիպ մենագրությունը, որի ազդեցության տակ մի շարք աշխատություններ լույս տեսան Լիբանանում, Սիրիայում, Իրաքում և արաբական այլ երկրներում:

Հայ ականավոր գիտնականը լուրջ ներդրում է ունեցել քաղաքական իսլամի ուսումնասիրության, իսլամական բումի և իսլամի ակտիվացման, դրանց պատճառների բացահայտման, մասնավորապես «Իսլամի քաղաքականացման և քաղաքականության իսլամացման» տեսադրույթի մշակման գործում, որը նա ներկայացրեց 1980 թ. Տաշքենդում կայացած համամիութենական գիտաժողովում՝ արժանանալով մասնագետների դրվատանքին: Այս մոտեցումն իր արտացոլումը գտավ «Իսլամը արդի Մերձավոր և Միջին Արևելքի երկրների քաղաքական կյանքում» մենագրության մեջ (հեղինակային կոլեկտիվ՝ պրոֆ. Ն. Հովհաննիսյանի ղեկավարությամբ, Ե., 1986, ռուսերեն) և «Իսլամի ակտիվացման մի քանի հետևանքների մասին» աշխատանքում (Современный ислам: Проблемы политики и идеологии, выпю 4, часть III, М., 1988): Հաշվի առնելով Ն. Հովհաննիսյանի ներդրումը իսլամագիտության հանգուցային հարցերի հետազոտության բնագավառում, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը Ն. Հովհաննիսյանին 1985 թ. նշանակեց Հայաստանում իսլամագիտական ուսումնասիրությունների համակարգող:

Հարկ է ընդգծել Ն. Հովհաննիսյանի լուրջ ներդրումը Երկրորդ համ-աշխարհային պատերազմի առաջացման մեջ արաբական երկրների դերի բացահայտման գործում: Մինչ այդ պատմաբանները պատերազմի ծագման պատճառները դիտարկում էին գլխավորապես արևմտյան տերությունների հակասությունների և շահերի տեսանկյունից՝ լրիվ անտեսելով Արաբական Արևելքի գործոնը: Ն. Հովհաննիսյանը հանգեց այն եզրակացության, որ զգալի է արաբական գործոնի դերը Երկրորդ համաշխարհային պատերազմի ծագման հարցում, կարևոր մի դրույթ, որը նորություն էր: Նա դրան անդրադարձել է «Իմպերիալիստական տերությունների քաղաքականությունը Արաբական Արևելքում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945 թթ.)» մեծարժեք աշխատության մեջ, և այս տեսակետն ընդունեցին մի շարք ականավոր գիտնականներ, այդ թվում՝ իրաքցի պատմաբան Աբու Ղարիբը, ռուս արևելագետներ Դ. Պիռլինը և Վ. Գուսարովը, գերմանացի մասնագետ Հորստ Գիրցը, չեխ մասնագետները և այլն:

Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրություններում արժանի տեղ է գրավում էթնոքաղաքական բախումների, առաջին հերթին, Ղարաբաղյան հիմնախնդրի լուսաբանությունը, որին նա նվիրել է հինգ մենագրություն, և որոնք լույս են տեսել ռուսերեն, անգլերեն, իտալերեն, այդ թվում՝ ԱՄՆ-ում՝ Մերիլենդի համալսարանում հրատարակված «Էթնոքաղաքական առճակատումներն Անդրկովկասում: Դրանց արմատները և լուծումները» (1997 թ.),

«Ղարաբաղյան հիմնախնդիրը. Անկախության և ազատության փշոտ ճանապարհը» (Երևան և Վենետիկ, 2005, անգլերեն, Հռոմ, 2011, իտալերեն) և այլն:

Ն. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում է մշտապես եղել Հայոց ցեղասպանության հայեցակարգային հիմնախնդիրների ուսումնասիրությունը՝ հետազոտությունների մի ամբողջ շարքով: Այդ առումով բացառիկ նշանակություն ունի նրա «Հայոց ցեղասպանություն. Հայասպանությունը որպես ամենագենոցիդային գենոցիդ», աշխարհի տասը լեզուներով՝ անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն, հունգարերեն, ճապոներեն, հայերեն, արաբերեն, պարսկերեն բազմապլան հետազոտությունը, որին պետք է ավելացնել նաև կորեերեն և ռումիներեն հրատարակությունները՝ համապատասխանաբար Հարավային Կորեայում և Ռումինիայում: Դա հիմնարար, իր նախադեպը չունեցող ուսումնասիրություն է, որում հեղինակը հայեցակարգային նոր մոտեցումներ է դրսևորել Հայոց ցեղասպանության պատճառների բացահայտման, միջազգային ճանաչման, այդ թվում և օսմանյան պետության կողմից: Այն արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության Առաջին կարգի դիպլոմի: Նա առանձնապես անդրադարձել է արաբ ժողովրդի, նրա հոգևոր և քաղաքական առաջնորդների հայանպաստ դիրքորոշմանը, տարագիր հայերին արաբների ցուցաբերած մարդասիրական վերաբերմունքին և օգնությանը: Նա առաջին հեղինակն է, որ ուսումնասիրության առարկա է դարձրել Հայոց ցեղասպանության հարցի լուսաբանությունը ժամանակակից արաբական պատմագրության մեջ, որին նվիրված մենագրությունը՝ «Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո», բացի հայերենից (Ե., 2004), լույս է տեսել նաև անգլերեն (2005), պարսկերեն (Թեհրան, 2009), և արաբերեն (Կահիրե, 2011) լեզուներով: Նրա ջանքերի շնորհիվ միջազգային լայն տարածում է ստացել «արմենոցիդ» եզրը՝ որպես «ամենագենոցիդային գենոցիդ» և «հայասպանության» հոմանիշ (տե՛ս նրա «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է», Ե., 2010, աշխատությունը):

Նշելով հայոց ցեղասպանության հարցում հայ գիտնականի հայեցակարգային նոր մոտեցման մասին՝ նկատի ունենք հետևյալ պարագաները: Ն.Հովհաննիսյանը հիմնավորում է, որ՝ ա/ Հայոց ցեղասպանությունն արդեն միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն է, բ/ Օսմանյան կայսրությունը ոչ միայն իրագործել է Հայոց ցեղասպանությունը, այլև առաջին պետությունն է, որը ճանաչել է այն՝ դատահրավական մակարդակով՝ 1919 թ. Ստամբուլում կայացած դատավճռով, որը մահապատժի դատապարտեց երիտթուրքական բոլոր գլխավոր հանցագործներին՝ հայերի կոտորածների և բռնագաղթի համար, գ/ արդի Թուրքիայի կառավարությունը պետք է ճանաչի և ընդունի օսմանյան դատարանի 1919 թ. այդ դատավճիռը երիտթուրքերին մահվան դատապարտելու վերաբերյալ, որը հավասարազոր է Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դ/ հայ ժողովուրդը դադարել է զոհ լինելուց և դարձել է պետութենաստեղծ ժողովուրդ. դեռևս 1918 թ., երբ դեռ շարունակվում էր Հայոց ցեղասպանության գործընթացը, նա վերականգնեց իր պետականությունը և հռչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, իսկ մոտ 70 տարի անց ստեղծվեց հայկական երկրորդ պետությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Ինչ

վերաբերում է դահճին՝ թուրքական պետությանը, ապա նա, ժխտելով Հայոց ցեղասպանության փաստը, դրանով իսկ պահպանում է դահիճ լինելու իր կարգավիճակը:

Ն. Հովհաննիսյանի՝ աշխարհի տարբեր երկրներում և տարբեր լեզուներով հրատարակված աշխատությունների թիվն անցնում է 550-ից. դրանց մեջ են ավելի քան 85 մենագրական ուսումնասիրություններ, որոնք գիտնականին բերել են միջազգային մեծ ճանաչում: Նա արտասահմանյան մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ է, այդ թվում՝ Նյու-Յորքի գիտությունների ակադեմիայի, Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի, Մոսկվայի ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի, Գերմանիայի բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի, Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի (Մոսկվա), Սիրիայի արաբական գիտության պատմության ընկերության, ԱՄՆ-ի ազգային աշխարհագրական ընկերության, Ցեղասպանագիտության միջազգային ասոցիացիայի, Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի և այլն: Բրիտանական ակադեմիայի հրավերով նա 1989 թ. գիտական ուսումնասիրություններ է իրականացրել Լոնդոնի, Օքսֆորդի և Էդինբուրգի համալսարաններում՝ շահելով Ֆուլբրայթի մրցանակ, 1993-1994 թ. գիտահետազոտական աշխատանքներ է կատարել ԱՄՆ-ի Ջորջ Վաշինգտոնի համալսարանում, իսկ 1995 թ.՝ Մերիլենդի համալսարանում, հետագայում նաև՝ Լիբանանի, Սիրիայի, Իրաքի և Եգիպտոսի գիտական կենտրոններում:

Ռուսական, ամերիկյան, գերմանական, անգլիական, արաբական և այլ երկրների պատմաբանները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել հայ գիտնականի աշխատությունների նկատմամբ՝ բարձր գնահատելով դրանք: Այսպես ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջիմի Քարտերի ազգային անվտանգության գծով խորհրդական, այժմ ԱՄՆ-ի ռազմավարական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոնի պրոֆեսոր Զբիգնև Բժեզինսկին, որի հետ հայ գիտնական ունեցել է մի շարք հանդիպումներ և քննարկումներ և պահպանում է նամակագրական կապ, ստանալով Ն. Հովհաննիսյանի «Հայաստանի արտաքին քաղաքականությունը» անգլերենով հրատարակված մենագրությունը, գրում է նրան. «Հարգելի պրոֆեսոր Հովհաննիսյան: Շնորհակալություն ձեր գրքի օրինակի համար: Դա վերաբերում է մի թեմայի, որի վերաբերյալ ինձ հարկ է շատ բան սովորել: Դատելով Թբիլիսիում մեր ունեցած զրույցներից՝ ես վստահ եմ, որ դա անելն օգտակար կլինի ինձ համար: Լավագույն ցանկություններով, անկեղծորեն՝ Զբիգնև Բժեզինսկի. 29.10.1999»: Այդ նույն գրքի մասին ահա թե ինչ է գրել պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանին մեր ժամանակների ականավոր դիվանագետ, Ռայսի համալսարանի (Հյուստոն, Տեխաս, ԱՄՆ), տնօրեն պրոֆեսոր Էդվարդ Ջերեջյանն իր և ԱՄՆ-ի նախկին պետ-քարտուղար Ջեյմս Բեյքերի անունից. «Պարոն Բեյքերը և ես ստացել ենք ձեր նոր գիրքը՝ նվիրված Հայաստանի արտաքին քաղաքականությանը, և արդեն ծանոթանում ենք ձեր տեսակետներին»:

Շատ հետաքրքիր են Էդինբուրգի համալսարանի Անվտանգության ուսումնասիրությունների ամբիոնի վարիչ, Բրիտանական ակադեմիայի անդամ Ջոն Էրիկսոնի մոտեցումները, որի հրավերով Ն. Հովհաննիսյանը դեռևս 1989 թ. զեկուցումով հանդես էր եկել նրա գլխավորած ամբիոնում: Ծանոթանալով Ն. Հովհաննիսյանի երկու

աշխատություններին՝ նա 2000 թ. սեպտեմբերի 18-ին հետևյալ նամակն է հղում նրան. «Հարգելի պրոֆեսոր Հովհաննիսյան: Ես խորապես երախտապարտ եմ Ձեզ «Ղարաբաղի հիմնախնդիրները. գործոններ, չափանիշներ և լուծման տարբերակներ» և «Անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը» գրքերն ինձ ուղարկելու համար: Դրանք շատ ինքնատիպ, արտակարգ կարևոր և մեծ տեղեկատվություն պարունակող մենագրություններ են, որ ես կարդացի մեծ օգուտ քաղելով ինձ համար, և որոնցից տեղեկացա աշխարհաքաղաքականության գործոնների մասին թարմ տեսակետների, որոնց վերաբերյալ ես կարիք ունեի հետագա մասնագիտական այնպիսի ղեկավարության, ինչպիսին Ձերն է: Այդպիսին է իմ տպավորությունը Ձեր ուսումնասիրությունների կարևորության վերաբերյալ, և ես իմ ավագ գործընկերոջը Լոնդոնում ծանոթացրեցի Ձեր աշխատությանը և հայտնագործությանը: Շատ մոտ ապագայում հույս ունեմ հատուկ քննարկում կազմակերպել Էդինբուրգի համալսարանում իմ գործընկերների հետ: Կրկին հայտնում եմ իմ անկեղծ շնորհակալությունը Ձեզ, որ այնքան բարի գտնվեցիք՝ ինձ ուղարկելով Ձեր անգնահատելի մենագրությունները: Անկեղծորեն՝ Ձեր Ջոն Էրիկսոն, Բրիտանական ակադեմիայի անդամ, 18.IX.2000»:

Ն. Հովհաննիսյանի «Իմպերիալիստական տերությունների քաղաքականությունը Արաբական Արևելքում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945թթ.)» մենագրությունը միանգամից հայտնվեց ռուս արևելագետների և միջազգայնագետ-ների գիտական հետաքրքրությունների կենտրոնում, որին անդրադարձան ինչպես մի շարք գիտական ամսագրեր, այնպես էլ ականավոր մասնագետներ: Դրան անդրադարձավ և իր ծանրակշիռ խոսքն ասաց հեղինակավոր արաբագետ, ԽՍՀՄ ԳԱ համալիր հետազոտությունների ինստիտուտի բաժնի վարիչ, դոկտոր Եվգենի Պիռլինը. «Հարգելի Նիկոլայ: Ես անձամբ շատ բան եմ ձեռք բերել Ձեզ հետ ծանոթությունից: Շնորհակալություն գրքի համար: Ես այն շատ ուշադիր եմ կարդացել և պետք է շնորհավորեմ իմ կողմից հարգված և սիրելի հեղինակին՝ թանկագին Նիկոլայ Հովհաննիսյանին, գիտական ճակատում մեծ և իսկական հաղթանակի, իսկական հաջողության համար: Գիրքը գերազանց է թե՛ բովանդակային, թե՛ ոճական և թե՛ եզակիության առումով»:

Ն. Հովհաննիսյանի՝ արաբների պատմությանը նվիրված աշխատությունների շարքում, ինչպես արդեն նշեցինք, իր նշանակությամբ առանձնահատուկ տեղ է գրավում «Արաբական երկրների պատմությունը (VIդ.-2007 թ.)» քառահատորյակը, որը հայ գիտնականի արաբագիտական ուսումնասիրությունների թագն ու պսակն է: Դա ցնցում և զարմանք առաջացրեց գիտական, այդ թվում և արաբական գիտական շրջանակներում, որոնք ընդունեցին, որ իրենք՝ արաբները, չունեն նման համապարփակ և ծանրակշիռ աշխատություն: Այդ փաստը հաստատվեց 2007 թ. դեկտեմբերին Կահիրեում գումարված միջազգային գիտաժողովում՝ կապված Կահիրեի համալսարանում «Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի» պաշտոնական բացման հետ, որին ներկա էին արաբական տարբեր երկրներից ժամանած մասնագետներ: Գիտաժողովը վարող համալսարանի պրոռեկտորը, շնորհավորելով գիտաժողովին մասնակցող Ն. Հովհաննիսյանին և բարձր

գնահատելով նրա քառահատորյակը, հայտարարեց. «Հայ գիտնականը մեզ բոլորիս դաս տվեց»: Իսկ Եգիպտոսի բարձրագույն կրթության փոխնախարար Ահմադ Խեյրին, հետագայում անդրադառնալով այդ հարցին, արաբներին «հորդորեց սովորել հայկական բնավորությունից» ("Egyptian Gazzette", Cairo, May 1. 2008): Ն. Հովհաննիսյանի՝ նախադեպը չունեցող այդ կոթողային ուսումնասիրության վերաբերյալ Եգիպտոսի Ալեքսանդրիայի համալսարանի Դամանհուրի Նոր և նորագույն պատմության բաժանմունքի ղեկավար, դոկտոր, պրոֆեսոր Ահմադ Ռիֆաթ ալ-Իմամը նշում է. «Ես բարձր եմ գնահատում արաբագիտության բնագավառում հայտնի պատմաբան Նիկոլայ Հովհաննիսյանի ծանրակշիռ վաստակը: Ես շատ լավ գիտեմ դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյանին՝ նրա արժեքավոր և ինքնատիպ աշխատություններից, որոնք տարբեր երկրներում հրատարակվել են ոչ միայն հայերեն, այլև արաբերեն, անգլերեն, գերմաներեն և այլ լեզուներով: Նա հայտնի է աշխարհի արևելագետների և արաբագետների շրջանում իր ստեղծագործ գաղափարներով և հայեցակարգերով, արաբական աշխարհի հանգուցային հարցերի նկատմամբ նոր մոտեցումներով: Ես՝ որպես արաբագետ, կարող եմ հավաստել, որ Ն. Հովհաննիսյանի աշխատությունները, որոնք Երևանից բացի, հրատարակվել են նաև Մոսկվայում, Լիբանանում, Եգիպտոսում, Սիրիայում, Անգլիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Իրաքում, Իտալիայում, Հունգարիայում և այլ երկրներում, նոր մակարդակի բարձրացրեցին արաբագիտությունը և խթանեցին արաբագիտական ուսումնասիրությունները աշխարհի տարբեր համալսարաններում և գիտական կենտրոններում: Այդ հրապարակումները նոր խոսք են արաբագիտության մեջ և նրան բերել են միջազգային մեծ ճանաչում: Մենք կցանկանայինք առանձնացնել նրա «Արաբական երկրների պատմությունը (VIդ.-2007 թ.)» հիմնարար, բացառիկ կարևորություն ունեցող և բովանդակությամբ եզակի ուսումնա-սիրությունը, որը տիտանական աշխատանքի արդյունք է»:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի գիտական ղեկավարությամբ մոտ 50 մասնագետ-արաբագետներ և միջազգայնագետներ պաշտպանել են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, այդ թվում՝ Սիրիայից, Լիբանանից, Հորդանանից, Եգիպտոսից, Վրաստանից, Ռուսաստանից և արտասահմանյան այլ երկրներից: Դրանց շարքում արժե հիշատակել Սիրիայի վարչապետ Մուսթաֆա Միրոյին, Սիրիայի կառավարության խորհրդական Ահմադ Ջառուշեին, Լիբանանի Առաջադիմական սոցիալիստական կուսակցության գաղափարախոս-ղեկավար Սալեհ Զահր ալ-Դինին, դիվանագետների՝ Եգիպտոսից, Հորդանանից և այլն: Նա պատրաստել է արաբագետների մի ամբողջ սերունդ:

Ն. Հովհաննիսյանը կառավարական պաշտոնական պատվիրակությունների կազմում այցելել է Սիրիա, Լիբանան, Իրաք, Հորդանան, Լիբիա, Հնդկաստան, Չինաստան և այլ երկրներ, մասնակցել Իրաքի պրեզիդենտ Ահմադ Հասան ալ-Բաքրի, Սիրիայի պրեզիդենտ Հաֆեզ Ասադի, Լիբանանի պրեզիդենտ Սուլեյման Ֆրանժիեի և վարչապետ Ռաշիդ Սոլհի, Պաղեստինի ազատագրության կազմակերպության ղեկավար Յասիր Արաֆաթի, Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության նախարար և

Հեղափոխական խորհրդի նախագահ, այաթոլլահ Խոմեյնիի հատուկ ներկայացուցիչ Մուստաֆա Չամրանի և այլ երկրների բարձրաստիճան պետական անձանց հետ բանակցություններին:

Ն.Հովհաննիսյանը կատարել է հասարակական մեծ ծավալի աշխատանքներ՝ եղել է Սովետա-արաբական բարեկամության ասոցիացիայի փոխպրեզիդենտ, Ասիայի և Աֆրիկայի համերաշխության խորհրդային կոմիտեի և նրա վարչության անդամ, Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահ, «ԽՍՀՄ-Իրաք» բարեկամության ընկերության փոխպրեզիդենտ, «ԽՍՀՄ-Լիբանան», «ԽՍՀՄ-ԵԺԴՀ» բարեկամության ընկերությունների վարչությունների անդամ և այլն: Նա բախումնաբանությունների լուծման Հայկական կենտրոնի հիմնադիր տնօրենն է, Հայ-Ատլանտյան ասոցիացիայի նախագահը:

ՀՀ վարչապետի որոշումով, 1999 թ. նոյեմբերին Ն. Հովհաննիսյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի Հայկական մասի անդամ:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում և ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում գործող ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի մասնագիտական խորհուրդների անդամ է:

2010 թ. նրան շնորհվել է «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:

Վաստակաշատ գիտնականը պարգևատրված է Մովսես Խորենացու, ՀՀ պաշտպանության նախարարության «Սպարապետ Վազգեն Սարգսյան», «Հայկական զինված ուժեր. 1992-2012», «Դրաստամատ Կանայան», «Բարեկամության բնագավառում ներդրման համար» (Մոսկվա) մեդալներով, ՀՀ Կառավարության «Հայոց Մեծ եղեռն» ոսկեզօծ մեդալով, Ֆրիտյոֆ Նանսեն հուշամեդալով, ԼՂՀ «Ղարաբաղյան շարժում» մեդալով, ՀՀ ԳԱԱ գովեստագրով, ՀՀ Ազգային ժողովի նախագահի պատվոգրով, «Հայաստան-Եգիպտոս. Դիվանագիտական հարաբերություններ. 15 տարի. Բարեկամություն և Համագործակցություն» մեդալով:

Քեմբրիջի (Անգլիա) միջազգային կենսագրական կենտրոնը հայ մեծանուն գիտնականին 2004 թ. հռչակել է «Աշխարհի առաջատար գիտնական», 2005-ին՝ ճանաչել «XXI դարի ականավոր գիտնական», իսկ 2009 թ.՝ ներառել «100 ամենաբարձրակարգ (top) գիտնականների» ցանկում:

ՄԱՆԱՍՅԱՆ Դ. Մ.
Պատմական գիտությունների թեկնածու